« ԿԱՐ ՈՒ ՁԵՎ» ԽՄԲԱԿԻ

ԾՐԱԳԻՐ

34 ժամ՝ շաբաթական 1 ժամ

10-12-րդ դասարանների համար՝ ավագ դպրոց

Խմբակավար՝ Աննա Մանուկյան

Խմբակի նպատակն է՝

- Ծանոթացնել մեքենայական և ձեռքի կարատեսակներին, կարելու աշխատանքների պլանավորման գործընթացին:
- Նպաստել նյութերի մշակման գործնական հմտությունների յուրացմանը:
- Զարգացնել դեկորատիվ աշխատանքի նկատմամբ հետաքրքրությունը, ստեղծագործական ինքնարտահայտման անհրաժեշտությունը:
- Զարգացնել ստեղծագործական կարողությունները, ճանաչողական գործընթացները՝ երևակայություն, մտածողություն, ուշադրություն:
- Ուղղորդել սովորողներին մասնագիտական կողմնորոշման գործում:
- Զարգացնել սովորողների աշխատանքային հմտությունները :
-

Խնդիրները՝

- Գործնական ստեղծագործական աշխատանք կատարելիս ինքնուրույն աշխատանքի և խմբում աշխատելու հմտության ձևավորում:
- Ծանոթանալ կարի տեսակներին:
- Ճանաչել և գործածել կարելու համար անհրաժեշտ գործիքները:
- Ծանոթանալ կարի տեսակներին, հագուստի մոդելավորմանը :
- Սովորել կարել գոգնոցներ, գլխարկներ, խոհանոցային պարագաներ:

Վերջնարդյունքները

- Կարել գոգնոցներ, խոհանոցային պարագաներ, էկո-պայուսակներ
- Ցուցադրել «Կար ու ձև» խմբակի երեխաների սեփական մտահղացմամբ ստեղծված աշխատանքները
- Կազմակերպել սեփական աշխատանքների ցուցահանդես վաճառք:

Բացատրագիր

«Կար ու ձև» խմբակի ծրագիրը ներկայացված է ստորև՝ աղյուսակի տեսքով: Աղյուսակները կազմված են հետևյալ բաժիններից՝

- Թեմայի անվանումը,ժամաքանակը
- Նպատակները
- Խնդիրները
- Վերջնարդյունքները
- Բովանդակությունը

Ծրագրում առանձնացված են որոշակի թեմաներ, որոնք համապատասխանում են սովորողների նախասիրություններին, հետաքրքրություններին ու պահանջմունքներին: Ծրագրում նշված է ընդհանուր ժամաքանակը ուսումնական տարվա համար, թեմայի

վերնագիրը, տրամադրվող ժամաքանակը, նպատակները, ակնկալվող վերջնարդյունքները՝ հիմնական շեշտը դնելով սովորողի գիտելիքների, կարողունակությունների ու հմտությունների զարգացման վրա: Ծրագիրը կազմելիս կարևորվել է նաև մասնագիտական կողմնորոշումը, հատկապես ավագ դպրոցում:

Հ/հ	Բովանդակություն	Նպատակ/վերջնարդյունք	Ժամաքանակ	Նշումներ
1.	Կար ու ձև	**Նպատակը՝** 1.Ծանոթացնել ձեռքի և մեքենայական կարատեսակնեին 2. Ծանոթացնել ձեռքի կարակութերի և թակալակարերի տեսակներին(եզրակար, մաքրակար, բլանդ կար, խաչկար, պատճեահանման կար, օղակակար) **Վերջնարդյունք՝** Կարողանա. 1.Աշխատել ձեռքի և մեքենայական կարի մեքենաներով: 2. Ընտրել ասեղները և թելերը: 3. Կատարել պարզ և բարդ կարատեսակներ:	5	Սովորողները աշխատում են ձեռքի և մեքենայական կարի մեքենաներով, սովորում կարերի տեսակներին:
2.	Հագուստի պատրաստման տեխնոլոգիա/ գոգնոց կարել	**Նպատակը՝** 1.Զարգացնել հագուստի չափսեր վերցնելու հմտություններ 2. Ձևավորել գոգնոցի ձևածք տալու հմտություն: **Վերջնարդյունք՝** Կարողանա՝ 1. Կառուցել գոգնոցի գծապատկերի քայլաշարը: 2. Կարել գոգնոց	5	Սովորողները ուսումնասիրում են գոգնոց նախագծելու տեխնիկան,այնուհետև ինքնուրույն գծագրում և ստեղծում են սեփական էսքիզը:
3.	Խոհանոցային պարագաներ	**Նպատակը՝** 1.Ծանոթացնել խոհանոցային պարագաների կարելու եղանակներին: 2. Կազմել գծապատկերներ: **Վերջնարդյունք՝** Կարողանա՝ 1.Ինքնուրույն մոդելավորել	10	Սովորողները ծանոթանում են խոհանոցային պարագաներ պատրաստելու տարբերակներին՝ բռնիչներ, սրբիչներ, թաթմաներ, գլխաշոր: Դրանց կարելու եղանակներին, կազմում

		խոհանոցային պարագաները: 2.Կատարել դետալների միացում՝ մեքենայական կարով: 3.Պատրաստի կարվածքի որակի ստուգում, կատարված աշխատանքների վերջնական մշակում:		են գծապատկերներ և իրականացնում:
4.	Գործնական աշխատանք	1.Այցելություն մասնագիտական քոլեջ, մոտիկից ծանոթանալու կարի տեխնոլոգիային: Կարողանա՝ 1.Կիրառել գործնականում կիրառված փորձը և ինքնուրույն աշխատել:	2	Այցելություն Տարածաշրջանային քոլեջ, Գյումրու թիվ 4 քոլեջ և հաղորդակից լինել կարի տեխնոլոգիայի նրբություններին:
5.	Էկո-պայուսակներ	**Նպատակը՝** 1.Ծանոթանալ պայուսակների նախագծման և մոդելավորման գործառույթներին, տեխնիկային **Վերջնարդյունք՝** **Կկարողանա** 1.Գծել պայուսակի գծագրեր, 2.Ձևել և կարել կարի մեքենայով էկո-պայուսակներ: 3.Ասեղնագործել և նկարել պայուսակների վրա:	11	Նախագծել էկոպայուսակներ և կարել մեքենայով: Նկարել և ասեղնագործել էկոպայուսակները:
6.	Ամփոփում	Ցուցահանդեսի կազմակերպում:	1	Կազմակերպել ցուցահանդես՝ ցուցադրել կատարված աշխատանքները:

Օգտագործված գրականություն

1.Տեխնոլոգիական դասագրքեր 5-7-րդ դասարաններ

2.https://mkuzak.am/wp-content/uploads/%D4%B4%D5%A5%D6%80%D5%B1%D5%A1%D5%AF-%D5%B4%D5%B8%D5%A4%D5%A5%D5%AC%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%B8%D5%B21.pdf
/Ներծակ մոդել ավորող, օնլայն ձեռնարկ/

3. https://fondeco.ru/hy/originalnye-vykroiki-fartukov-dlya-kuhni-svoimi-rukami-kak-sshit-krasivyi/
4. «Կարի արտադրության տեխնոլոգիա» ձեռնարկ օնլայն ձեռնարկը ստորև՝/https://marysergeyevna.wordpress.com/2013/01/23/%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B1%D5%A5%D5%BC%D5%B6%D5%A1%D6%80%D5%AF-%D5%AF%D5%A1%D6%80%D5%AB-

%D5%A1%D6%80%D5%BF%D5%A1%D5%A4%D6%80%D5%B8%D6%82%D5%A9-3/ /

5. https://youtu.be/LVLzbs--1Jg /Անվճար դասեր/

Ն ու թատերական բազան՝

1. Կարի մեքենաներ՝ ձեռքի և մեքենայական/ առկա/
2. Թելեր, ասեղներ,մկրատներ /առկա/
3. Կտորներ/ առկա/
4. Ներկեր, վրձիններ /առկա/